

ւորներուն համար, որոնց բոլոր ունեցածը անխաւ կերպով յափշտակեր էր Տրիօզ? նաւապետը. այդ իրողութեան վկայելու համար ստորագրած են ուխտաւորներէն 24 ականաւոր անձեր, իբր ականատեսներ (Անդ. էջ 12 41—42): Պօղոս վրդ. կը կարծուի ըլլալ ան՝ որ 1666 ին Մինաս եւ Եղիա վրդ.ներու հետ եպս. ձեռնադրուեցաւ Ս. Յակոբի տաճարին մէջ Եղիազար կթղ.էն: Ըստ Օրագրութեան Մինաս Ամգեցիի Պօղոս վրդ. կը յիշուի ն. Սսոյ 1692 ին:

ՄՁ. Թ. 85 ընդօրինակութեան տեսքը ունի յիշատակարանի մը պատճէնը որ յայտնի է է թէ ո՞ր ձեռագիրէն ընդօրինակուած է հոն. կը պատմուի հրաւիրակ Պօղոս վրդ.ի մը սկստմամբ հետեւեալը որ շատ կը նմանի գերոյիշեալ դէպքին: Ուխտաւորներով լեցուն նաւ մը՝ Ռձիսի (= 1695) Սեպտ. 10 թուին, մէջը ըլլալով Պօղոս վրդ. եւ Պապա-Մինասի որդեգիր Յովհաննէսը, ճամբայ կ'ելլէ Պոլսէն եւ Պօղազ հիսարէ անցնելով կուգայ Սախըզի դէմը. հակառակ ազգաբարձութեան՝ նաւն առաջ կ'երթայ վտանգ մը չկասկածելով. բայց ձրանսըզի տօնանման կը պաշարէ ուխտաւորաց այդ նաւը. և ուխտաւորները կ'սկսին լալ և ողբալ. կը կոչուտուին անոնց ինչքերը, մերկ եւ բոկ ցամաք կ'ելլեն և կը հասնին Իզմիր. կը դիմեն Պալեօզներուն, որոնք գիր կուտան Պօղոս վրդ.ին, որպէս գի տօնանմայի ղափտանին գիմելով՝ ետ առնէ կոչուտուած ապրանքները. վարդապետը քանի մը անձերով կը գտնէ Ղափտանը եւ կը փնտռէ յափշտակուած ապրանքները. կը տեսնէ որ իր արկղը բացուած է եւ մէջը գտնուած ոսկին՝ ազամանդներն ու մարգարիտները յափշտակուած են. կը վստահացնեն թէ վաղը կը գտնուին կորսուածները և ետ կը դարձնենք. միւս օրը գիրնին հետ մահադեղ կը խառնեն եւ կը խմցնեն վարդապետին, որ կը վախճանի և կ'ըլլայ յետին չար քան զառաջինն:

Այս արկածը թէեւ կը պատմուի ականատեսի մը կողմէն. բայց աղբիւրն թէ՛ անձանօթ է և թէ՛ ժամանակադրական տեսակետով և իրերու ընթացքով չի՛ յարմարիր՝ բուն իսկ Պօղոս վրդ.ին եւ միւս ստորագրողներու վեհետիկ գրած նամակին բովանդակութեանը: